ԻՄԱՍՏԱԼԻՑ ԿՅԱՆՔ

(անվանի պատմաբան, պրոֆ. Խիկար Բարսեղյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Անհավատալի է, որ մեզ հետ չէ Խիկար Բարսեղյանը՝ բարեկիրթ, հմայիչ մարդը, խոշոր գիտնականը, պարտքի ու պատասխանատվության բարձր գիտակցությամբ տոգորված քաղաքացին։

Բայց ավաղ, դառն ճշմարտություն է դա։

Սփոփիչ է, սակայն, որ Խիկար Բարսեղյանը մեզ հետ չէ միայն ֆիզիկապես։ Նա դեռ երկար, շա՜տ երկար կմնա հարազատների ու ազգականների, ընկերների ու բարեկամների սրտերում, բոլոր նրանց հիշողության մեջ, որոնք բախտ են ունեցել շփվելու այդ զարմանալի առինքնող մարդու հետ, ունկնդիր լինելու նրա իմաստուն խոսքերին, ըմբռշխնելու նրա անհատակ բարությունը։

Ծնվել է 1918 թ. հունիսի 7-ին, Գորիսի Հին Շինուհայր գյուղում, աղքատ գյուղացու ընտանիքում։ Հայրը՝ Հակոբ Բարսեղյանը, շատ տարիներ ծառայել էր ռուսական բանակում, Առաջին համաշխարհայինի տարիներին կռվել Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում։

Շինուհայրցիներն աշխատասեր էին, հպարտ ու քաջ։ Գյուղը գտնվում էր ադրբեջանական սահմանից ոչ հեռու, Որոտան գետի կիրճի բերանին և հզոր պատնեշ էր Թուրքերի ներխուժման ճանապարհին։ Պատահական չէ, որ Որոտանի կիրճի գյուղերը դարեր ի վեր մնացել էին ազգային անխառն դիմագծով։

Տասնամյակներ անց Խիկար Բարսեղյանն իր մի շարք հուշագրությունների մեջ և հատկապես «Այդպես ապրեցին» մեծարժեք գրքում որդիական սիրով է նկարագրել իր մանկության օրերի հայրենի գյուղը, նրա աշխատասեր շինականներին, նրանց կենցաղը, նիստ ու կացը, կատարած գործերը։

1926-ին Խիկարն ընդունվում է գյուղի 7-ամյա դպրոցի առաջին դասարանը։ Հենց սկզբից ուշիմ էր, համեստ, խելացի։ Վերջին դասարանում ընդունվում է կոմերիտմիության մեջ։ Գյուղի աչքի ընկած պատանիներից էր, հետո եկան երիտասարդական տարիները։

Դա մի ժամանակաշրջան էր, երբ կործանվում էին հասարակական հին արտադրահարաբերությունները, և հաստատվում էր սոցիալիստական նոր կացութաձևը։ Անցյալի գիրկն էին անցնում նաև հին արտադրողական ուժերը։ Խիկարը գյուղի դպրոցի վերջին դասարանում էր, որ գյուղ մտան առաջին ձիաքարշ հնձիչները, հետո՝ առաջին տրակտորը։ Անցնելու էր մեկ-երկու տասնամյակ և հազարամյակներ հայ գյուղացուն ծառայած, նաև՝ նրան տանջած, արորն ու գութանն անցնելու էին պատմության գիրկը։

Երիտասարդ Խիկարը երազում էր դառնալ գյուղատնտես և ծառայել հայրենի ոստանի վերելքին։ Եվ նա ընդունվում է Գորիս քաղաքի գյուղատնտեսական տեխնիկումը։ Առաջին կուրսից թղթակցում է «Կարմիր Զանգեզուր» թերթին։ Այդ թղթակցությունները ապագա հայտնի լրագրողի և բազմահմուտ խմբագրի պարզ ու անպաճույճ առաջին գրվածքներն էին։

Տեխնիկումն ավարտելիս Բարսեղյանն արդեն հեղինակ էր «Կարմիր Զանգեզուր» թերթում տպագրած մի քանի տասնյակ հոդվածների ու ակնարկների։ Պատահական չէ, որ հաշվի առնելով նրա գրական ակնհայտ ձիրքը, ուսուցիչներն ու ընկերները բազմախոստում երիտասարդին խորհուրդ են տալիս ուսումը շարունակել պատմության կամ լեզվաբանության գծով։

1937—1941 թթ. Խիկար Բարսեղյանն ուսանում է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում։ Այստեղ ուսումնառությունը նա ավարտում է որպես լենինյան թոշակառու և ինստիտուտի կոմերիտական կազմակերպության ազատված առաջին քարտուղար։

Ավարտական քննությունները համընկան երկրի վրա կախված արհավիրքին։ Սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը։ Բարսեղյանին աշխատանքի են գործուղում «Սովետական Հայաստան» թերթի խմբագրություն, որպես գրական աշխատող։ Այստեղ երկու ամիս աշխատելուց հետո նա դիմում է ներկայացնում և 1941 թ. սեպտեմբերին կամավոր մեկնում գործող բանակ։ Իր առաջին մարտական մկրտությունը ստանում է Կովկասի նախալեռներում։

1942 թ. օգոստոսից Խիկար Բարսեղյանը 89-րդ հայկական լեգենդար Թամանյան դիվիզիայի շարքերում էր։ Սկզբում նրան նշանակում են վաշտի քաղդեկ, ապա՝ գնդի կոմերիտմիության բյուրոյի ազատված քարտուղար։ Բարսեղյանը մասնակցում է Հյուսիսային Կովկասի և Ղրիմի համար մղված մարտերին, աչքի է ընկնում Գրոզնու մատույցներում, Թերեքի ափերին, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում, հատկապես Թաման թերակղզում և Կերչի ազատագրման համար մղած ահեղ մարտերում։

Նույնիսկ այդ ծանրածանր օրերին նա գրիչը վար չի դնում, և ռազմաճակատային զինվորական թերթերում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա բազմաթիվ հոդվածներն ու ակնարկները, որոնցում նկարագրված են հայ մարտիկների սխրագործությունները, այն մարտական գործողությունները, որոնց մասնակից էր եղել ինքը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ռազմիկների սխրանքը, իր հույզերն ու ապրումները Խիկար Բարսեղյանը հետագայում վերարտադրել է 1982 թ. հրատարակած «Կրակների միջով» վավերագրական պատումի մեջ՝ 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանի հանգամանալից առաջաբանով։ Չմոռանանք նշել, որ գեներալը մինչև իր կյանքի վերջը սերտ բարեկամությամբ և շերմ սիրով կապված էր վաղեմի զինակից-մարտիկի հետ։

Պատերազմը վերջացավ, տուն դարձան հայրենիքի զավակները։ Մեր սերընդի մարդիկ լավ են հիշում այդ օրերը։ Նրանք եկել էին կուրծքները զարդարված շքանշաններով, եկել էին հպարտության զգացումով. չէ՞ որ մասնակից էին եղել ամենաարյունահեղ կռվին և հաղթել էին։

Լեյտենանտ Խիկար Բարսեղյան, մայոր Արշավիր Հակոբյան, մայոր Աշոտ Հարությունյան, մայոր Արշակ Խուրշուդյան, ռազմաճակատային թերթի խմբագիր, մայոր Արամայիս Մնացականյան, գումարտակի հրամանատար, մայոր Հրանտ Սիմոնյան, կապիտան Գևորգ Ղարիբջանյան, տասնյակներ, հարյուրներ, հազարներ և, իհարկե, դիվիզիայի կոմիսար Սուրեն Թովմասյան, մի ազնվագույն ու քաջակորով հայորդի, որ տարիներ հետո գլխավորելու էր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը։

Խիկար Բարսեղյանը կրկին իր սիրած լրագրական աշխատանքին էր։ 1945—1948 թթ. նա աշխատում է «Խորհրդային Հայաստան» թերթի կուսակցական-կազմակերպական բաժնի վարիչ։ Կիսամաշ զինվորական համազգեստով, բարեկիրթ և բարեհամբույր երիտասարդին շատերն են հիշում։ Շաբաթ չկար, որ ընթերցողը չկարդար նրա հոդվածը կամ ակնարկը։

Բարսեղյանն աճում էր ամսեամիս, օրեցօր։ 1948—1949 թթ. նա աշխատում է Լենինականի «Բանվոր» թերթի խմբագիր։ Նրա մասին հաստատուն կարծիք ունեին հանրապետության ղեկավարները, այդ թվում՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը։ 1949—1952 թթ. նա աշխատում է ՀԿԿ կենտկոմում որպես մամուլի, ռադիոյի և հրատարակչությունների սեկտորի վարիչ։

Հետևում են կյանքի բազմաբեղուն տասնամյակները.

1952—1953 թթ.՝ Լենինականի օկրուգային «Բանվոր» թերթի խմբագիր, 1953—1954 թթ.՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ, 1954—1961 թթ.՝ Մլի Հայկական մասնաճյուղի տնօրենի տեղակալ, ապա՝ տնօրեն,

1961—1967 թթ.՝ ԳԱ Պատմության ինստիտուտում գիտաշխատող, 1967—1970 թթ.՝ «Հայաստան» հրատարակչության տնօրեն, 1970—1984 թթ.՝ Ակադեմիայի գիտական ինֆորմացիայի սեկտորի վարիչ, 1984-ից՝ Ակադեմիայի հրատարակչության տնօրեն, ապա 1990 թվից ցկյանս՝ ԳԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտնական։

Այս բուռն ու արգասաբեր կյանքի 50 տարիները Խիկար Բարսեղյանը նվիրել է գիտությանը։ 1950 թ. նա պաշտպանել է թեկնածուական, 1964-ին դոկտորական դիսերտացիաներ, 1966-ին ստացել է պրոֆեսորի կոչում։

Իր զարմանալի աշխատասիրությամբ ու համառությամբ մեծանուն գիտնականը ստեղծել է մի ամբողջ գրադարան։ Նրա գրչին են պատկանում հինգ տասնյակից ավելի արժեքավոր մենագրություններ, տասնյակ բրոշյուրներ, 1000-ից ավելի հոդված։ Համահեղինակ էր շատ կոլեկտիվ աշխատությունների, կազմել ու խմբագրել է բազմաթիվ վավերագրական ժողովածուներ։

Պրոֆ. Խիկար Բարսեղյանի գիտական հսկա ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել չորս մասի. Հայ ժողովրդի պատմության հարցեր, Անդրկովկասի հեղափոխական շարժումների և Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության հարցեր, բոլշևիկյան մամուլի պատմության հարցեր, հուշագրություններ։

Այս բոլոր բնագավառներում նա թողել է անուրանալի արժեքներ, բայց պատմարանի ձիրքն առավել ցայտուն դրսևորվել է Հայաստանի Կոմկուսի պատմության հարցերի գիտական մշակման և լուսաբանման բնագավառում։

Ամենից առաջ հիշատակենք «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» մեծարժեք, հիմնարար հետազոտությունը, որի 1-ին հատորը լույս է տեսել 1967-ին, 2-րդը՝ 1975-ին։ Աշխատությունն ընդգրկում է 1880-ական թվականներից 1920 թվականը ժամանակաշրջանը։ Նրանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել մեծաթիվ արխիվային փաստաթղթեր ու վավերագրեր։ Հեղինակը ցույց է տվել Հայաստանում մարքսիզմի տարածման ընդհանուր օրինաչափությունները, նաև՝ Հայաստանի պայմաններում դրանց առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին հայ ժողովրդի երկու հատվածների սոցիալ-քաղաքական զարգացման տարբեր աստիճաններով։

Պրոֆ. Բարսեղյանն Անդրկովկասի պրոֆեսիոնալ հեղափոխականների կյանքի ու գործունեության խոշոր հետազոտողներից մեկն էր։ Բայց նրա ստեղծագործական ոգեշնչման մշտական աղբյուրը Ստեփան Շահումյանի լուսեղեն կերպարն էր։ Գիտնականն ընթերցողներին է ներկայացրել Շահումյանի կյանքի ու գործունեության տարեգրությունը, նրա գիտական կենսագրությունը, բազմաթիվ բրոշյուրներ և հոդվածներ։

Բարսեղյանի գրչին են պատկանում մեծարժեք աշխատություններ բոլշևիկյան հայ մամուլի պատմության վերաբերյալ։ Անդրկովկասում և Հայաստանում 1900—1920 թ. հրատարակված «Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կռիվը», «Բանվորի ձայն», «Կայծ», «Նոր խոսք», «Կարմիր դրոշակ», «Սոցիալ-դեմոկրատ», ընդհանուր թվով 44 անուն բանվորական և բոլշևիկյան մամուլի օրգանների բծախնդիր ուսումնասիրությունը նա ամփոփել է 1958-ին լույս ընծայած «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն» հիմնարար աշխատության մեջ։ Գիրքն իր պատվավոր տեղն է գրավել Գր. Գալեմքյարյանի, Գ. Լևոնյանի, Մ. Պոտուրյանի, Ռաֆայել Կարապետյանի, Արտաշես Կարինյանի՝ հայ պարբերական մամուլին նվիրված աշխատությունների շարքում։

Վերջապես, գիտնականը մեծապես նպաստել է արդի հայ հուշագրության հարստացմանը։ Հիշենք նրա «Կրակների միջով» (1982), «Այսպես ապրեցին» (1958) գրքերը, «Կարմիր պանթեոնից» եռագրությունը, էլի ուրիշ երկասիրություններ։ Անկեղծ զգացումներով և անմիջականությամբ են համակված նրա հուշապատումները հայ մշակույթի խոշոր գործիչներ Իսահակյանի, Շիրազի, Սևակի և ուրիշների մասին։

Լինելով հայրենասիրական խոր զգացումների տեր անհատ՝ դարաբաղյան շարժման առաջին օրերից Բարսեղյանը ժողովրդի հետ էր։ Նա հանդես եկավ

մի շարք ուշագրավ գործերով՝ ի պաշտպանություն Արցախի ժողովրդի արդարացի պայքարի։

Պրոֆ. Բարսեղյանը փայլուն դասախոս էր, երկար տարիներ դասախոսել է հանրապետության մի շարք բուհերում։ Անուրանալի է նրա մեծ վաստակը դիտական կադրերի պատրաստման գործում։

Հայրենիքը բարձր է գնահատել իր արժանավոր զավակի ծառայությունները։ Նա պարգևատրված էր բազմաթիվ մարտական շքանշաններով ու մեդալներով, Հայաստանի Գերագույն խորհրդի պատվոգրերով, Ստ. Շահումյանի և Վավիլովի անվան մրցանակի դափնեկիր էր, հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործիչ։

Խիկար Բարսեղյանն օրինակելի ամուսին էր, անզուգական հայր, սիրված եղբայր։

Վերջին տարիներին զրկված լինելով կյանքի ընկերոջից՝ իր սփոփանքը նա տեսնում էր զավակների ու թոռների մեջ, որոնք նրան շրջապատել էին մեծ հոգատարությամբ ու գուրգուրանքով։

Ինչպես ամեն մի նորմալ մարդ, Բարսեղյանը նույնպես ունեցել է նախանձողներ ու չարակամներ։ Բայց բարեկամները անհամար էին։

Նա իր մահկանացուն կնքեց 1996 թ. հունվարին։ Շա՜տ ափսոս, որ նա մեզ հետ չէ այսօր։ Մեզ հետ չէ, բայց մնացել է այդ հրաշալի մարդու մեծ վաստակը, մնացել են նրա բարի, անմոռաց անունը և անջնջելի հմայքը։

Հ. Ռ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս